

## **Տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառ**

2021թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել են 149.7 մլն. դրամ արժողությամբ 239 կմ ճանապարհների ձմեռային և 167 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ, իսկ մարզային (տեղական) նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում 61.9 մլն. դրամ արժողությամբ 147.8 կմ ձմեռային և 76 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

1. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 98.0-կմ101.4 (3.4կմ) հատվածի հիմնանորոգման աշխատանքներ 600 մլն. Դրամ արժողությամբ: Մրցույթը կայացել է:

2. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ108.4 - կմ126.1 հատվածի հիմնանորոգում (17.7կմ) - 3.000 մլն. Դրամ արժողությամբ: (Իրականացվում են եզրաքարերի տեղադրման, մայրերի կառուցման, կամուրջների նորոգման և հողային աշխատանքներ):

3. Մ2-Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ150.7 - կմ167.6 հատվածի հիմնանորոգում (16.9կմ) - 2. 897 մլն. դրամ արժողությամբ ( Իրականացվում են երթևեկելի մասի նախապատրաստական, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման և հողային աշխատանքներ):

4. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ120 - կմ124 հատվածներում հողային պատտառի փլուզված հատվածների պաշտպանիչ հենապատերի և կառուցվածքների վերականգնում -58.8 մլն. դրամ (մրցույթը կայացել է):

5. Մ10 Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 123+500 հատվածում վերգետնյա անցման կառուցում՝ 30.0մլն. դրամ արժողությամբ (փորձաքննության փուլում է)

Համաշխարհային բանկի միջոցներով նախատեսվում է իրականացնել Հերմոն-Վարդահովիտ 6.2 կմ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ - 700.0 մլն. Դրամ արժողությամբ (նախագիծը պատրաստ է և քննարկման փուլում է)

**Տարբեր ծրագրերով նախատեսված աշխատանքներ**  
**Ընդամենը՝ 7մլրդ 497.4 մլն. դրամ**

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումները իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաքիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2021թ. առաջին կիսամյակում կազմվել և ներկայացվել է 2022 – 2024թթ. մարզային (տեղական) և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև մարզային (տեղական) նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսական հայտը:

Աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և  
ճանապարհաշինության բաժնի պետ Խ. Ասլանյան

02.07.2021